ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2019 թվականի 2-րդ կիսամյակի և 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համագյուղացիներ, համայնքի ավագանու հարգարժան անդամներ, հյուրեր: Այսօր ցանկանում եմ ձեր ուշադրությանը և քննարկմանը ներկայացնել հաշվետվություն՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2019 թվականի 2-րդ կիսամյակի և հաշվետու տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է համայնքի տնտեսությունների գրքերի ուղղում և համայնքի բնակիչների հաշվառում: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3665, մշտական՝ 3537 մարդ, որից 340 եզդիներ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում գրանցվել է 42 ծնունդ և 23 մահ:

Գումարվել է ավագանու 15 նիստ, որի ընթացքում լսվել են բազմաթիվ հարցեր և ընդունվել են ավագանու 60 համապատասխան որոշումներ: Իրականացվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել 118 դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

Մուտք է արվել 431 գրություն, որոնք քննարկվել են, տրվել է ընթացք և պատասխանը ուղարկվել հասցեատերերին:

Համայնքի հիմնախնդիրների լուծման համար տարբեր կառույցներին գրվել է 304 գրություն:

Բնակչությանը տրամադրվել է 843 տեղեկանք: Ընդունվել են համայնքի ղեկավարի 80 որոշում և արձակվել 27 կարգադրություն:

2. Ֆինանսների բնագավառում.

Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, ավագանու որոշումներով բյուջեում կատարվել են փոփոխություններ:

Կազմակերպվում և գանձվում են գույքահարկը և հողի հարկը:

Հողի հարկը՝ 8 800.0 դրամի տարեկան ծրագրի դիմաց գանձվել է 7850.2 դրամ, կամ կատարվել է 89.2 %:

Գույքահարկը՝ 17350.0 դրամի տարեկան ծրագրի դիմաց գանձվել է 17265.1 դրամ, կամ կատավել է 99.5.%:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում.

Ոստիկանության տեղամասային տեսուչի աջակցությամբ աշխատանքներ են տարվել հասարակական կարգի պաշտպանության բնագավառում:

4. Պաշտպանության բնագավառում.

Աջակցություն է ցուցաբերվել զինակոչին, պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձածները պահանջվող կարգի համաձայն վերցվել են հաշվառման:

Աջակցել ենք զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափողների որոնման, հայտնաբերման աշխատանքներին:

Դրամական սոց. օգնություն է ցուցաբերվել

Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին և վիրավոր ազատամարտիկներին:

Հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում,:

Աջակցություն է ցուցաբերվել Գայ համայնքում բնակվող 3 արցախյան ազատամարտիկների՝ նրանց տրամադրելով ուղեգիր Քոբուլեթի և վճարելով ուղեգրի արժեքի 50 %-ը՝50000դրամ:

5. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Կառուցապատողներին սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն, արգելվել է ապօրինի շինարարությունը: 2019 թվականի ընթացքում 19 կառուցապատողների տրվել է շինարարության թույլտվություն: Կատարվել են համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտ- բետոնե ծածկույթի վերանորոգում:

6. Հող օգտագործման բնագավառում.

Հողային հաշվեկշիռը կազմելու համար կատարվել է հողերի ընթացիկ հաշվառում և ներկայացվել կադաստրի տարածքային ստորաբաժանում:

Կատարվել է ցանքի ընթացիկ հաշվառում և ներկայացվել է տարածքային վիճակագրական վարչություն:

Համայնքում ապօրինի հողօգտագործողներ չկան: Տարվում են աշխատանքներ կադաստրի կողմից քաղաքացիներին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներում տեղ գտած սխալների ուղղման ուղղությամբ:

7. Տրանսպորտի բնագավառում

Կատարվել են աշխատանքներ համայնքի դպրոցին հարող փողոցների հետիոտնային անցումներում գծանշումներ կատարելու ուղղությամբ:

Կատարվել են համայնքի փողոցներում տեղադրված կանգառների վերանորոգման աշխատանքներ:

8. Առևտրի և սպասարկման բնագավառում.

Համայնքում գործում են 6 խառն ապրանքների վաճառքի խանութներ, 2 սուպերմարկետ, 2 դեղատուն, 2 թունաքիմկատների խանութ,1 կրպակ և 6 հասարակական սննդի օբյեկտներ:

Հաճախակի ստուգումներ է անցկացվում առևտրի օբյեկտներում և խախտման դեպքեր չեն արձանագրվել:

9. Կրթության և մշակույթի բնագավառում.

Համայնքը ունի բարեկարգ դպրոց, որտեղ ընդգրկված են 437 աշակերտներ և 34 ուսուցիչներ: Համայնքապետարանը դպրոցում անցկացվող միջոցառումներին իր մասնակցությունն ու աջակցությունն է ցուցաբերում: Դպրոցում գործում է նախակրթարան 3 դասարանով, որից 1-ը՝ համայնքապետարանի բյուջեի միջոցներով:

Համայնքն ունի նախադպրոցական տարիքի 295 երեխաներ, սակայն չունի մանկապարտեզ, որը խիստ անհրաժեշտություն է: 2019 թվականին մշակվել է Գայ համայնքի մանկապարտեզի շենքի կառուցման նախագիծ: Համայնքը ցանկանում է մասնակցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաներ տրամադրելու ծրագրին , որի համար բյուջեում նախատեսել է գումար :

Մշակույթի տունը հիմնանորոգված է , սակայն խիստ անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման աշխատանքներ:

Համայնքում գործում է «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը, որը հիմնավերանորոգվել է համայնքի բյուջեի հաշվին և 2019 թվականին <<Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում ջեռուցման համակարգ է տեղադրվել:

Համայնքը աջակցություն է ցուցաբերում նաև համայնքում գործող Սուրբ Նշան եկեղեցուն:

10. Առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի բնագավառում

Համայնքում գործում է « Գայի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը, որին ցուցաբերվում է աջակցություն՝ ուղղված համայնքի սանիտարական վիճակի բարելավմանը, համաճարակային հիվանդությունների կանխարգելմանը:

Համայնքում գտնվող ֆուտբոլի դաշտում հաճախակի կազմակերպվում են միջհամայնքային մրցումներ;

11. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում.

Համայնքում կան 318 թոշակառուներ և 40 նպաստառու ընտանիք: Համայնքապետարանի բյուջեից 2019 թվականի ընթացքում ցուցաբերվել է 2165 000 դրամի սոց. օգնություն:

12. Գյուղատնտեսության բնագավառում.

Ստարվել է անասունների հաշվառում և ներկայացվել վիճակագրական վարչություն:

Համայնքում կազմակերպվել են հանդիպումներ բնակչության հետ, որտեղ արծարծվել են մշակաբույսերի տարածված հիվանդությունների և ժամանակակից բուժման նոր մեթոդների լուսաբանման հետ կապված հարցեր:

Գայ համայնքում բնակչությունը հիմնականում զբաղվում է տնամերձ ,որոշ չափով՝ սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված հողամասերի վրա կառուցված ջերմոցներում բանջարեղենի մշակությամբ:

Համայնքի շատ հողատարածքներ՝մոտավորապես 300 հա հիմնականում չեն մշակվում, ոռոգման ջրի բացակայության և այլ պատճառներով:

Համայնքում առկա հիմնախնդիրներ

1.մանկապարտեզի շենքի կառուցում

2.մշակույթի տան վերանորոգում

3.<<Գայի բուժ. ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի շենքի կառուցում

4.Ոռոգման ջրի խնդրի լուծում/ մայր առվի մաքրում/:

Համայնքում առկա այս հիմնախնդիրները հնարավոր չէ իրականացնել միայն համայնքապետարանի բյուջեի հաշվին:

Հուսով ենք, որ ՀՀ կառավարությունը և Արմավիրի մարզպետարանը կաջակցեն մեզ այս հարցում:

Գայ համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան